ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

ի պատասխան Ձեր 02.04.2026թ. հ.96-2026թ. գրության՝ Ավան վարչական շրջանի Քուչակ թաղամասի հ.47, Նարեկացու թաղամասի հ. 31, հ.32 և հ.43 շենքերի, Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի հ.4 շենքի 1-ին մուտքի, հ.5 շենքի 1-ին մուտքի, հ.2/4 շենքի 1-ին մուտքի, հ.3/5 և հ.3/6 շենքերի, Սայաթ-Նովայի թաղամասի հ.1/3 և հ.1/4 շենքերի հասցեների աղբահանության աշխատանքների կազմակերպման վերաբերյալ, տեղեկացվում է.

«Երևանի աղբահանության և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կողմից գրությամբ նշված հասցեներում և հարակից տարածքներում ամենօրյա գրաֆիկով իրականացվում են աղբահանության աշխատանքներ:

Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի 3/5 և 3/6 շենքերը գտնվում են մաքուր վիճակում:

Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի հ.4 և հ.3/2, Սայաթ-Նովայի թաղամասի հ.1/3 շենքերի հարակից տարածքներում թափառող շների առկայության վերաբերյալ, տեղեկացվում է.

Ավան-Առինջ 1-ին միկրոշրջանի հ.4 շենքի 1-ին մուտքի և հ.3/2 շենքերի հարակից տարածքներից կենտրոնի կլինիկա է տեղափոխվել յուրաքանչյուր հասցեից երկուական թափառող կենդանի, իսկ Սայաթ-Նովայի թաղամասի հ.1/3 շենքի հարակից տարածքից կենտրոնի կլինիկա է տեղափոխվել մեկ մեծ և երկու փոքր թափառող կենդանի:

Սայաթ-Նովայի թաղամասի հ.1/3 շենքի 1-ին մուտքի վերելակի անսարքության վերաբերյալ տեղեկացվում է.

Սայաթ-Նովայի թաղամասի հ.1/3 շենքի 1-ին մուտքի վերելակը կառավարման մարմնի գրության համաձայն՝ ներառված է 2026 թվականի վերելակների փոխարինման ծրագրում, իսկ մյուս երկուսը գտնվում են աշխատանքային վիճակում:

Քուչակ թաղամասի հ.47 շենքի հետնամասի բարեկարգման հարցի վերաբերյալ տեղեկացվում է.

Հասցեն ընդգրկված է 2026 թվականի բակային բարեկարգման ծրագրում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ